

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ «ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ
ՂԱՐԻՔՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ «ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 4
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԵՎ
ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՇՄԱՀ-ՀՐՄԱՇՁԲ-23/30»

ք. Արթիկ

«12» 09 2023թ.

«Արթիկի համայնքապետարան», իդեմս համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅ ՔՈՆՍՐԱԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, իդեմս տնօրեն Արտակ Ռափյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքի կարիքների համար Սուբվենցիոն ծրագրի շրջանակում Արթիկ քաղաքի Հակոբյան փողոցի թիվ 36/1 հասցեում գտնվող «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» և Արթիկ քաղաքի Ղարիքջանյան փողոցի 1-ին նրբանցք թիվ 5 հասցեում գտնվող «Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերի վերանորոգման, տարածքների բարեկարգման, խաղահրապարակների և պարիսպների կառուցման աշխատանքներ այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

1-ին չափաբաժին՝ 125 օրացույցային օր

2-րդ չափաբաժին՝ 125 օրացույցային օր

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացույցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացույցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու

դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի

արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 /երեք հարյուր վաթսուհինգ օր/ (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 3 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման

արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 369.683.892 (երեք հարյուր վաթսուհինը միլիոն վեց հարյուր ութանասուներեք հազար ութ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, որից 61.613.982 (վաթսուամեկ միլիոն վեց հարյուր տասներեք հազար ինը հարյուր ութանասուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները (շինհրապարակի կազմակերպումը), որը պետք է գրավոր հավաստված լինի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողությունն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության կողմից:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{30.1}:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:


6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են



երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 /յոթ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՇՄ Արթիկի Համայնքապետարան
Հասցե՝ Ազատության հրապարակ 1
ՀՎՀՀ 05553661
Բանկ՝ ՀՀ Ֆն Գործառ Վարչություն
h/h 900202001138
Համայնքի ղեկավար՝
Ա. Ոսկանյան



ՎԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՅ ԲՈՆՍԱԹՐԱՔՆ» ՍՊԸ
«Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գր.
Լուսավորիչ 2-րդ նրբ., տ 9
ՀՎՀՀ 05550663
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570068301190100
Տնօրեն՝ Ա. Մալխյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ 1-ին չափաբաժին

N/N	Աշխատանքների և ծախսերի շիֆրը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ		Առավելագույն կշիռ %
					Միավոր	Ընդամենը	
1	2	3	4	5	6	7	
1		Քանդման և մաքրման աշխատանքներ					
2		1.Տանիք					
3	46--96 կիռառ	Ցինկապատ քիթեղից տանիքի ջրահեռացման առուներ քանդում /վերադարձ/	100մ ²	1,44	25,00	36,00	
4	46--96	Ա/ց ալիքավոր քերթերից տանիքի ծածկի ապամոնտաժում /վերադաշծ/	100մ ²	5,97	25,00	149,25	
5	10--70 ց-0,8	Փայտե էլեմենտների ապամոնտաժում /վերադարձ/	մ ³	11,50	11,00	126,50	
6	12-299 ց-0,8	Ցեմենտյա հարթեցնող շերտի քանդում	100մ ²	3,30	95,00	313,50	
7	12--287 ց-0,8	Վերնածածկի վրա խարամե ջերմամեկուսիչ շերտի քանդում շին աղբի հետ միասին	մ ³	66,00	10,00	660,00	
8		Ընդամենը				1285,25	0,85
9		2. Պատեր և միջնորմներ					
10	46--88	Թեթև բետոնե սալերից միջնորմների քանդում 100մմ հաստ ներառյալ բացվածքների քանդումը	մ ²	290,00	1,50	435,00	
11	8--173 ց-0,5	Ապակե միջնորմների քանդում	մ ²	24,00	7,00	168,00	
12	46--40	Տուֆ քարից պատերում բացվածքների իրականացում 40սմ հաստ	մ ³	7,00	15,00	105,00	
13		Ընդամենը				708,00	0,47
14		3. Պատուհաններ					
15	46--122	Փայտե պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ միասին /վերադարձ/	մ ²	207,00	2,52	521,64	
16		Ընդամենը				521,64	0,34
17		4. Դռներ					
18	46--124	Փայտից դռների քանդում /վերադարձ/	մ ²	158,00	1,34	211,72	
19	46--124 կիրառ	Մետաղապլաստե դռների քանդում	մ ²	15,00	3,00	45,00	

20		<i>Ընդամենը</i>				256,72	0,17
21		<i>5. Հատակներ</i>					
22	46-119	Ցեմենտե հարթեցնող շերտի քանդում	մ ²	790,00	1,00	790,00	
23	46-99	Բետոնե նախապատրաստական շերտի քանդում	մ ³	61,00	5,00	305,00	
24	27--32	Հողախառը խճից նախապատրաստական շերտի քանդում	մ ³	244,00	3,00	732,00	
25	46--121	Լինոլեումե ծածկույթի քանդում	մ ³	47,00	1,10	51,70	
26	46--103	Մանրահատակե հատակի ծածկույթի քանդում	մ ³	549,00	0,49	269,01	
27	46--109	Խեցե սալիկներից հատակների քանդում	մ ²	294,00	0,49	144,06	
28		<i>Ընդամենը</i>				2291,77	1,51
29		<i>6. Ներքին հարդարում</i>					
30	ռ11--80	Պատերի և առաստաղի վրայից ներկի քերում	մ ²	1442,00	0,40	576,80	
31	ռ15--66	Պատերի վրայից պաստառի պոկում	մ ²	1518,00	0,20	303,60	
32	ր13--5	Կերամիկական սալիկներից երեսապատումների քանդում	մ ²	110,00	0,53	58,30	
33		<i>Ընդամենը</i>				938,70	0,62
34		<i>8. Այլ աշխատանքներ</i>					
35	1-1587	Էքսկավատորով շինարարական աղբի բարձում ավտոինքնաթափերի վրա 0,65խոր.մ շերեպի տարողությամբ	1000մ ³	0,19	1100,00	209,00	
36	C310-7	Շին աղբի տեղափոխում 7կմ 227,3*1,8	տ	409,14	1,32	540,06	
37	1-1605	Աշխատանք աղբակույտի վրա	1000մ ³	0,19	1000,00	190,00	
38		<i>Ընդամենը</i>				939,06	0,62
39		ճարտարապետական մաս					
40		<i>Տանիք</i>					
41	10-70	Տանիքի փայտե կարկասի էլեմենտների տեղադրում	մ ³	16,68	150,00	2502,00	
42	6--86	Հարթեցնող շերտի անրանավորում 44ռ-1	տ	1,37	500,00	685,00	
43	12-299 12-300	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում 20մմ հաստ	100 մ ²	6,65	164,00	1090,60	
44	12-289	Գոլոշամեկուսացման իրականացում իզոգամով բիտումի քսուկի վրա, 2 շերտ	100 մ ²	6,65	300,00	1995,00	
45	12-288-1	Ծածկի ջերմամեկուսացում կիսակոշտ հանքաքամքակով 200մմ հաստ	մ ³	66,00	65,00	4290,00	
46	12-284	Ծածկի ջերմամեկուսացում կիսակոշտ հանքաքամքակով 150մմ հաստ	մ ²	335,00	6,00	2010,00	
47	12--404	Տանիքի ծածկի իրականացումը ալիքավոր գործարանային ներկածածկույթով ցինկապատ մետաղական թիթեղով h=25մմ, δ=0.5մմ (կավարամածով	մ ²	597,00	7,00	4179,00	

48	10-71	Չեղնահարկի պատուհանների տեղադրում շերտափեղկերով	հատ	4,00	30,00	120,00	
49	12-280	Տանիքի փոքր ծածկի իրականացումը հարթ ցինկապատ քիթեղով պիպերի հետ միասին	100 մ ²	0,90	600,00	540,60	
50	12-278	Տանիքի ջրհորդանների իրականացում ցինկապատ քիթեղով, ծ=0,55մմ, տախտակամածի վրա	100 գծ.մ	2,05	540,00	1107,00	
51	8--211	Ջրի հոս խողովակ ցինկապատ քիթեղից ծ=0,5մմ, Փ140	գծ.մ	88,00	3,0000	264,00	
52	12-283	Սետաղական ճաղաշար Լ	գծ.մ	90,00	6,00	540,00	
53	12-283	Չնարգել ծ=0,5մմ, L=2000	գծ.մ	90,00	2,00	180,00	
54	10--203	Տանիքի կավարամածի հրապաշտպանություն	մ ²	597,00	0,10	59,70	
55	10-201	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	մ ³	16,68	5,00	83,40	
56	10--211	Կավարամածի մշակում հակաճեղքիչ լուծույթով	մ ²	597,00	0,10	59,70	
57		Ընդամենը				19706,00	13,03
58		Պատեր					
59	8--163	Պատի շարք կանոնավոր ձևի տուֆ քարով 40սմ հաստ /տեղամասեր/	մ ³	9,00	30,00	270,00	
60		Պատերի մեջ հորիզոնական անցքերի գայլիկոնում ժ-20մմ L-300մմ	հատ	55,00	0,20	11,00	
61	15--10 15--59 տեխ մաս կետ 1,5	Որմնախարիսի երեսապատում 30մմ հաստ բազալտե սալիկներով 7,7-(0,08*7), 0,15-(0,005*7), 10,2-(0,15*7),/ներառյալ աստիճանների և թեքահարթակների կողային մասերը/	մ ²	96,0	25,00	2400,00	
62	46--15	Բացվածքների ամրացում մետաղական շրջանակներով /ամրանից և ցանցից/	տ	1,98	19,00	37,68	
63		Անկյունակ 100*7 մմ 1666կգ	գծ.մ	1,67	7,40	12,33	
64		Թերթավոր պողպատ	տ	0,22	420,00	94,08	
65		Ամրան 10Ա500	տ	0,09	420,00	39,06	
66		Ամրանային ցանց 6Աս1-	տ	0,04	420,00	14,70	
67	15--256 կիրառ	Տորկրետ սվաղ ցեմ ավազե շաղախով 30մմ հաստ	մ ²	128,00	3,00	384,00	
68		Ընդամենը				3262,85	2,16
69		Ծածկ					
70	6--173	Միաձույլ ե/բ աստիճանավանդակի իրականացում B-25դասի բետոնից	մ ³	11,7	71,80	836,47	
71		ՑԱ-1 դասի ամրանի արժեքը	տ m	0,1	500,00	57,00	
72		18A-500c դասի ամրանի արժեքը	տ m	0,3	500,00	144,00	
73		Ընդամենը				1037,47	0,69
74		Աստիճաններ					
75	7--735	Նիկելապատ ալյումինե բազրիքների տեղադրում	գծ.մ	35,00	27,55	964,25	
76		Նիկելապատ ալյումինե բռնակների տեղադրում հաշվանդամների համար	գծ.մ	7,20	27,55	198,36	
77		Ընդամենը				1162,61	0,77
78		Միջնորոմներ					

79	10-,45	Սանհանգույցները մետաղապլաստե միջնորմների իրականացում դռնակով(ներառյալ ամրացման դետալները)	մ ²	47,00	35,00	1645,00	
80	8--169	Բետոնբլոկները միջնորմների իրականացում 10*20*40սմ հաստ	մ ²	300,00	5,00	1500,00	
81	8--169	Բետոնբլոկները մարտկոցների բացվածքների փակում 10*20*40սմ հաստ	մ ²	64,00	4,00	256,00	
82	8--140	Բետոնե բլոկները միջնորմների իրականացում 20*20*40սմ հաստ 87մ ²	մ ³	17,40	25,00	435,00	
83	8-150	Անցքերի լցափակում թեթև բետոնով B 15դասի	մ ³	8,01	70,00	560,70	
84		12A-500c դասի ամրանի արժեքը	տ	0,63	500,00	313,50	
85	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում /մետաղ կապ/	տ	0,47	500,00	234,00	
86	8-59	Շարվածքի ամրանավորում ցանցով ամրան 6 A-Ic	տ	0,17	500,00	83,20	
87		Փրփրապլաստ 20մմ հաստը L-200	մ ²	18,00	1,00	18,00	
88	6--170	Ե/բ բարավորների իրականացում B15դասի բետոնով	մ ³	0,60	75,00	45,00	
89		6Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0,01	500,00	5,20	
90		12A-500c դասի ամրանի արժեքը	տ	0,05	500,00	27,00	
91		Ընդամենը				5122,60	3,39
92		Պատուհաններ					
93	Տեղեկագիր	Մետաղապլաստե : երկշերտ ապակեփաթեթով,4+4մմ,60մմ պրոֆիլով բացվող /տեղադրումը և տեղափոխումը ներառված է գնի մեջ /արտերկիր	մ ²	39,20	35,00	1372,00	
94		Մույնը չբացվող /արտերկիր/	մ ²	91,38	35,00	3198,30	
95	Տեղեկագիր	Ալյումինե երկշերտ ապակեփաթեթով,4+4մմ,60մմ պրոֆիլով բացվող /տեղադրումը և տեղափոխումը ներառված է գնի մեջ /արտերկիր	մ ²	24,00	50,00	1200,00	
96	Տեղեկագիր	Ալյումինե երկշերտ ապակեփաթեթով,4+4մմ,60մմ պրոֆիլով չբացվող /տեղադրումը և տեղափոխումը ներառված է գնի մեջ /արտերկիր	մ ²	56,11	50,00	2805,50	
97	10--103	Պատուհանագոգի իրականացում պլաստմասե կոնստրուկցիայով, b=400մմ	մ ² բացվածք	196,43	1,80	353,57	
98	15--78	Բազալտե պատուհանագոգերի տեղադրում 5սմ հաստ 25սմ լայ, 78գծ.մ	մ ²	19,50	73,00	1423,50	
99	15--78	Բազալտե պատուհանագոգերի տեղադրում 10սմ հաստ 25սմ լայ, 36գծ.մ	մ ²	9,00	95,00	855,00	

100		Պլաստմասե պատուհանագոգեր 0,40սմ հաստ	գծ.մ	118,00	4,00	472,00	
101		Ընդամենը				11679,87	7,72
102		Դռներ					
103	տեղեկագիր	Ալյումինե, արտաքին, ջերմային կամրջակով, ապակեպատ դռան տեղադրում 60մմ պրոֆիով (տեղափոխումը ,տեղադրումը ներառյալ ապակեպատումը 4+4 մմ, սարքերը կողպեքը)	մ ²	63,60	91,00	5787,60	
104	Շուկա	Սետաղապլաստե դռների տեղադրում ապակեպատ դռան տեղադրում 60մմ պրոֆիով (տեղափոխումը ,տեղադրումը ներառյալ ապակեպատումը 4+4 մմ,	մ ²	135,18	62,00	8381,16	
105		Ընդամենը				14168,76	9,37
106		Հատակներ					
107	11-6	հատակների տակ խճից նախապատրաստական շերտի իրականացում 30սմ հաստ	մ ³	182,97	16,00	2927,52	
108	11-11	Խարամաբետոնե նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստ	մ ³	60,99	70,00	4269,30	
109	12-284	ջերմամեկուսացում կիսակոշտ հանքաքամքակով 150մմ հաստ	մ ²	609,90	6,50	3964,35	
110		Պոլիմերային թաղանթ 2մմ	մ ²	1219,00	1,00	1219,00	
111	6-86	Հարթեցնող շերտի ամրանավորում	տ	1,30	500,00	650,00	
112	11-11	Հարթեցնող բետոնե շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 50մմ հաստությամբ	մ ²	30,50	5,00	152,50	
113	11-55-11-56	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստութ.	մ ²	281,0	4,00	1124,00	
114	11-18	Ջրամեկուսացում իզոգամով /ներառյալ պատերի կողքով/	մ ²	84,00	5,00	420,00	
115	11-135	Կերամագրանիտե հատակի իրականացում	մ ²	371,10	13,00	4824,30	
116		Հոմոգեն վինիլային ծածկույթ 2մմ պաշպանիչ շերտով տեղափոխումը և տեղադրումը ներառված է գնի մեջ	մ ²	221,00	17,00	3757,00	
117	11-198 կիրառ	Լամինատե հատակի իրականացում սպունգի շրեշակի և սոսինձի հետ միասին	մ ²	58,60	8,00	468,80	
118		Ընդամենը				23776,77	15,72
119		Ներքին հարդարման աշխատանքներ					
120	ռ11-64	Առաստաղի գաջի սվաղի նորոգում	մ ²	175,00	1,30	227,50	
121	15-246-1	Միջնորմների և պատերի լավորակ սվաղ գաջով	մ ²	524,00	2,50	1310,00	
122	ռ11-57	Պատերի գաջի սվաղի նորոգում	մ ²	200,00	1,30	260,00	

123	15--277-1	Դռների և պատուհանների շեյերի լավորակ գաջե սվաղ	մ ²	132,00	2,50	330,00	
124	15--256	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով	մ ²	505,00	2,00	1010,00	
125	15--660	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով մածկումով	մ ²	1485,00	2,50	3712,50	
126	15--661	Առաստաղի լավորակ ներկում լատեքս ներկով մածկումով	մ ²	890,00	2,50	2225,00	
127	15--84	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	մ ²	725,00	7,40	5365,00	
128		Ընդամենը				14440,00	9,55
129		Տարհանման աստիճաններ 3 հատ					
130		1. Հողային աշխատանքներ					
131	1--961	Հողի փորում 3-րդ կարգի գրունտներում ձեռքով	մ ³	2,53	10,00	25,30	
132	1-968	Բնահողի հետլիցք ձեռքով	մ ³	2,30	5,00	11,50	
133	23--228	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ի վրա	տ	2,70	5,00	13,50	
134	310-3	Տեղափոխում մինչև 3կմ	տ	2,70	5,00	13,50	
135	1-1184	Բնահողի տոփանում պնմամատփանով	մ ³	2,30	10,00	23,00	
136		Ընդամենը				86,80	0,06
137		2. Հիմքեր					
138	6--2	Կետային հիմքերի իրականացում B -15 դասի բետոնից	մ ³	3,20	50,00	160,00	
139		Անկերային հեղյուսներ» մանեկ Մ18»տափողակ Մ22	կ-տ	16,00	0,50	8,00	
140		Ինքնապարուրվող պտուտակներ D-16մմ, L-200մմ	հատ	21,00	2,00	42,00	
141		Ընդամենը				210,00	0,14
142		3, Մետաղական աստիճաններ					
143	9--46	Մետաղական աստիճանահարթակի և աստիճանների մոնտաժում	տ	0,94	200,00	188,00	
144		Պրոֆիլ 160*80*4մմ	գծ.մ	37,84	10,50	397,32	
145		Թերթավոր պողպատ 6մմ,8մմ հաստ	տ	0,36	600,00	216,00	
146	33--	Մետաղական կոնստրուկցիաների ներկում հակակորոզիոն ներկով 2 անգամ	տ	1,30	50,00	65,00	
147		Ընդամենը				866,32	0,57
148		Ջեռուցում					
149		Մոնտաժային աշխատանքներ					
150	19--5	Պատի կախովի կոնդենսացիոն կաթսա 66կվտ	հատ	2,00	15,00	30,00	
151		Պատի կախովի կոնդենսացիոն կաթսա 66կվտ/արժեքը/	հատ	1,00	1800,00	1800,000	
152		Պատի կախովի կոնդենսացիոն կաթսա 40կվտ/արժեքը/	հատ	1,00	1600,00	1600,00	
153	18--133	Մեմբրանային ճնշումային ընդարձակման բաք V-10;	հատ	1,00	20,00	20,00	

154	18--185	Շրջանառության պոմպ H-16 Q=3մ ³ /ժամ N-,16կվտ	հատ	2,00	40,00	80,00	
155		Շրջանառության պոմպ H-15մ Q=4մ ³ /ժամ N-,120վտ /արժեքը/	հատ	1,00	45,00	45,00	
156		Շրջանառության պոմպ H-11մ Q=2,5մ ³ /ժամ N-,96վտ /արժեքը/	հատ	1,00	35,00	35,00	
157	18--179	Մատակարարող խողովակաշարի սանրիկ D-108մմ L-0,5մ	հատ	1,00	30,00	30,00	
158		Յետադարձ խողովակաշարի սանրիկ D-108մմ L-0,5մ	հատ	1,00	30,00	30,00	
159	18--118 կիրառ	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում	էկմ	153,99	8,00	1231,92	
160		Ալյումինե ջեռուցման մարտկոցներ h-500մմ	սեկց	531,00	5,00	2655,00	
161	18--113	Ընդգետնյա կոնվեկտորներ KC 250,303,2000 Q=3մ ³ /ժամ 1326վտ	էկմ	11,20	3,00	33,60	
162		Ընդգետնյա կոնվեկտորներ KC 250,303,2000 Q=3մ ³ /ժամ 1326վտ	հատ	4,00	80,00	320,00	
163	16--261	Պոլիարոպիլենե խողովակների տեղադրում d=20*1,9մմ ,փորձարկումով d-15/ PN10	գծ.մ	255,00	1,00	255,00	
164	16--262	Պոլիարոպիլենե խողովակների տեղադրում d=25*2,3մմ ,փորձարկումով /d-20/ PN10	գծ.մ	175,00	1,50	262,50	
165	16--263	Պոլիարոպիլենե խողովակների տեղադրում d=32*3մմ ,փորձարկումով /d-25/ PN10	գծ.մ	120,00	2,00	240,00	
166	16--264	Պոլիարոպիլենե խողովակների տեղադրում d=50*3մմ ,փորձարկումով /d-40/ PN11	գծ.մ	52,00	3,00	156,00	
167		Պոլիարոպիլենե խողովակների ձևավոր մասեր d=20մմ	հատ	390,00	0,08	31,20	
168		Պոլիարոպիլենե խողովակների ձևավոր մասեր d=25մմ	հատ	60,00	0,10	6,00	
169		Պոլիարոպիլենե խողովակների ձևավոր մասեր d=32մմ	հատ	40,00	0,15	6,00	
170		Պոլիարոպիլենե խողովակների ձևավոր մասեր d=50մմ	հատ	18,00	0,18	3,24	
171		խողովակի անցումներ մետաղ- պպլաստմաս d=20մմ	հատ	117,00	0,10	11,70	
172		խողովակի անցումներ պոլիարոպիլենից d=15մմ	հատ	94,00	0,08	7,52	
173		խողովակի անցումներ պոլիարոպիլենից d=25մմ	հատ	24,00	0,12	2,88	
174		խողովակների ամրակալներ d=20-32մմ	հատ	600,00	0,05	30,00	
175	16--134	Ջերմակարգավորիչ փական d=15մմ	հատ	71,00	5,50	390,50	
176	16--134	Կցորդչայի փական d=15մմ	հատ	109,00	3,00	327,00	

177	16--134	Կցորդչայի փական d=25մմ	հատ	12,00	3,00	36,00	
178		Տաք ջրի գոլիչ d=25մմ լատունե	հատ	2,00	5,00	10,00	
179		Սառը ջրի գոլիչ d=20մմ լատունե	հատ	2,00	5,00	10,00	
180		Եռաբաշխիկ խցուկով d=15մմ	հատ	86,00	0,10	8,60	
181	18--229	Օդի հեռացման փական d=15մմ	հատ	71,00	3,00	213,00	
182		Ընդամենը				9917,66	6,56
183		Շինարարական աշխատանքներ					
184	16--40	Մետաղական պարկուճներ d=40-70մմ	գծ.մ	19,00	3,00	57,00	
185	16-89	Նույնը հիմքերում d=100մմ 4հատ	գծ.մ	2,80	7,50	21,00	
186	23--2	Բետոնից առվի տակ խճի հիմք 81*10մմ	մ ³	2,60	10,00	26,00	
187	6--225	Ե/բետոնից առու կոնվեկտորների համար 250*305*2000մմ B12,5	մ ³	0,90	230,00	207,00	
188	6--83	Ամրանային ցանց Վռ3 100*100մմ	տ	0,03	500,00	15,00	
189	6--1	Բետոնից առու խողովակների համար 67*46մմ, 181*46մմ B12,5	մ ³	3,70	39,00	144,30	
190		Բետոնից առվի ե/բ ծածկի սալեր П-3 74*57*5СМ	մ ³	0,83	90,00	74,70	
191		Մետաղական անկյունակ առվի ծածկի սալի տակ 80*50*5մմ Լ-4մ 20կգ	գծ.մ	6,50	15,00	97,50	
192		Հատակի տակ խողովակների մեկուսացում սպունգով 2սմ հաստ	գծ.մ	19,00	0,30	5,70	
193	26--16	Բետոնե առվի մեջ խողովակների մեկուսացում ֆոլգայապատ հանքաբամբակով 3սմ հաստ	մ ³	0,44	40,00	17,60	
194		խողովակների տակ բետոնից հեմարաններ 12*15*12սմ	մ ³	0,10	100,00	10,00	
195	8--27	Բետոնից առվի մեկուսացում 1 շերտ բիտումով	մ ²	46,00	0,50	23,00	
196	14--52	Անցքերի բացում հիմքերում d=120մմ	հատ	4,00	0,50	2,00	
197	46--51	Անցքերի բացում պատերում d=70մմ	հատ	24,00	0,50	12,00	
198	46--54	Անցքերի բացում միջհարկային ծածկերում d=70մմ	հատ	32,00	0,50	16,00	
199	46--51	Անցքերի բացում միջնորմներում d=70մմ	հատ	30,00	0,50	15,00	
200		Ընդամենը				743,80	0,49
201		Օդափոխություն					
202		Սան.տեխ.աշխատանքներ					
203	20--786	Ներածող -արտածող ռեկուպերացիոն սարքավորում ИНСОЛАР КРЕС -125 Q-80/40 մ3/ժամ H-25վտ n-2300պտ/րոպպպե D-200 G1,5ԿԳ	հատ	16,00	110,00	1760,00	

204		Ներածող -արտածող ռեկուպերացիոն սարքավորում ИСОЛАР КРЕС -125 Q-80/40 մ3/ժամ H-25վտ n-2300պտ/րոպպպե D-200 արժեքը	հատ	16,00	240,00	3840,000	
205	20--735	Կանալային օդափոխիչ Q- 350մ3/ժամ N-0,03կվտ-D-200	հատ	1,00	7,00	7,00	
206		Կանալային օդափոխիչ Q- 350մ3/ժամ N-0,03կվտ-D-200 արժեքը	հատ	1,00	34,00	34,00	
207		Կանալային օդափոխիչ Q- 420մ3/ժամ N-0,04կվտ--D- 200	հատ	1,00	40,00	40,00	
208		Կանալային օդափոխիչ Q- 300մ3/ժամ N-0,036կվտ - D150	հատ	1,00	20,00	20,00	
209		Կանալային օդափոխիչ Q- 270մ3/ժամ N-0,032կվտ- D150	հատ	1,00	30,00	30,00	
210		Առանցքային օդափոխիչ Q- 100մ3/ժամ N-0,012կվտ- D100	հատ	4,00	10,00	40,00	
211		Առանցքային օդափոխիչ Q- 120մ3/ժամ N-0,014կվտ- D100	հատ	2,00	14,00	28,00	
212		Առանցքային օդափոխիչ Q- 200մ3/ժամ N-0,018կվտ- D100	հատ	4,00	20,00	80,00	
213	20--605	Աղմկախլացուցիչ D200 L- 600	հատ	2,0	25,00	50,00	
214	20--605	Աղմկախլացուցիչ D150 L- 600	հատ	2,0	25,00	50,00	
215	20--764	Ջտիչ ՓБ ՓБ-200 D200մմ L- 206մմ 2 հատ	հատ	0,06	7,00	0,44	
216		Ջտիչ ՓБ ՓБ-200 D200մմ L- 206մմ 2 հատ	հատ	2,00	7,00	14,00	
217	20--479	Սահափական /զասլոնկա/ АЗД-200Н-РП կրպարարովD200	հատ	2,0	30,00	60,00	
218	20--479	Սահափական /զասլոնկա/ АЗД-150Н-РП կրպարարով D150	հատ	4,0	25,00	100,00	
219	20--1կիրառ	Օդատար ցինկապատ թիթեղից կլոր կտրվածքի 0,5մմ հաստ D=150մմ	մ ²	8,5	4,00	34,00	
220	20--1կիրառ	Օդատար ցինկապատ թիթեղից կլոր կտրվածքի 0,5մմ հաստ D=200մմ	մ ²	16,0	4,00	64,00	
221	20--689	Ճկուն միացումներ D=150մմ	հատ	4,0	3,00	12,00	
222	20--689	Ճկուն միացումներ D=200մմ	հատ	6,0	5,00	30,00	
223		Պլաստմասից օդափոխության խողովակներ D=100մմ	գծ.մ	95,00	2,40	228,00	
224		Պլաստմասից օդափոխության խողովակներ D=150մմ	գծ.մ	3,00	4,00	12,00	
225	20--402	Կարգավորող ցանցաշաժեր 100*200մմ	հատ	6,0	4,00	24,00	
226	20--402	Կարգավորող ցանցաշաժեր 120*200մմ	հատ	8,0	4,00	32,00	
227	20--409	Կարգավորող ցանցաշար D100	հատ	12,00	5,00	60,00	

228	20--402	Կարգավորող ցանցաշար D120	հատ	1,00	4,00	4,00	
229	20--696	Օդատարների ամրացման մետաղական սարքեր	կգ	35,00	0,80	28,00	
230	26--16	Օդատարների մեկուսացում ֆոլգայապատ հանքաբամբակով 3սմ հաստ	մ ³	1,70	15,00	25,50	
231	20--506	Ձոնտ ցինկապատ քիթեղից կլոր կտրվածք, D=300մմ	հատ	5,0	5,50	27,50	
232	20--507	Ձոնտ ցինկապատ քիթեղից կլոր կտրվածք, D=400մմ	հատ	2,0	6,00	12,00	
233	20--499 կիրառ	Ձոնտ ցինկապատ քիթեղից կլոր կտրվածք, 550*300 մմ	հատ	2,0	10,00	20,00	
234	20--502	Ձոնտ ցինկապատ քիթեղից կլոր կտրվածք, 1400*300 մմ	հատ	2,0	10,00	20,00	
235	46--51	Անցքերի բացում պատերում d=250մմ 50սմ հաստ	հատ	1,00	10,00	10,00	
236	46--54	Անցքերի բացում միջհարկային ծածկերում d=150մմ 30սմ հաստ	հատ	27,00	0,40	10,80	
